No. 11 հուլիս 2015

ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԼՐԱՏՈՒ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակ



ԵԱՀԿ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵԱՀԿ գործող նախագահ, Սերբիայի արտաքին գործերի նախարար Իվիցա Դաչիչը հունիսի 3-ին այցելեց Հայաստան: Երևանում նա հանդիպեց Նախագահ Սերժ Սարգսյանի, Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի, Ազգային Ժողովի Նախագահ Գալուստ Սահակյանի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում Գործող Նախագահը մատնանշեց տարածաշրջանային երկխոսության կարևորությունը, ինչպես նաև խոսեց ԵԱՀԿ-Հայաստան համագործակցության մասին: Դաչիչն արտահայտեց իր մտահոգությունը հրադադարի՝ վերջերս արձանագրված խախտումների թվի ավելացման շուրջ և վերահաստատեց իր աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի համանախագահների ջանքերին՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը: Գործող Նախագահն այցելեց նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, որտեղ հանդիպեց գրասենյակի աշխատակազմին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը մայիսի 21-ին Հայաստանի Ամերիկյան Համալսարանի «Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն»-ին նվիրաբերեց շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի ստուգման համար անհրաժեշտ շարժական սարքավորումներ և պարագաներ: Այդ սարքավորումները Կենտրոնին թույլ կտան իրականացնել հողի և ջրի ծանր մետաղներով աղտոտվածության մակարդակի ստուգում և վերլուծություն, ինչը հատկապես կարևոր է հանքարդյունաբերություն ունեցող համայնքներում շրջակա միջավայրի անվտանգության և առողջապահական տեսանկյուններից: Սարքավորումները հասանելի կլինեն նաև ուսանողների համար, ովքեր կարող են դրանք օգտագործել իրենց հետազոտությունների նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՇԱԲԱԹ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հունիսի առաջին շաբաթում կազմակերպեց միջոցառումների մի շարք, որի նպատակն էր նպաստել Հայաստանում ոստիկանություն-հասարակություն փոխհարաբերություններին ու համայնքային ոստիկանության մոդելին:

Հունիսի 1-ին՝ երեխաների միջազգային օրվա կապակցությամբ, Արտաշատում իրականացվեց մի միջոցառում, որը միատեղեց տեղի ոստիկանությանն ու ոչ բարվոք համայնքներից մեկում գտնվող հանրակացարանի երեխաներին: «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոնը» ԵԱՀԿ աջակցությամբ կազմակերպեց խաղեր, սպորտային մրցումներ և մի շարք այլ միջոցառումներ՝ դրանցում ընդգրկելով թե՛ ոստիկաններին, թե՛ երեխաներին:

Հունիսի 4-ին ԵԱՀԿ-ի, Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության (ՁՈՒԺՎ) ժնևյան կենտրոնի և ՀՀ ոստիկանության կողմից նախաձեռնվեց «Ոստիկանության և հասարակության փոխհարաբերությունները» միջազգային կոնֆերանս: Ոստիկանությունից, Ազգային Ժողովից, Օմբուդսմենի գրասենյակից և քաղաքացիական հասարակությունից շուրջ 60 մասնակիցներ քննարկեցին ոստիկանություն-հասարակություն գործընկերության ամրապնդման միջազգային և տեղական մոտեցումները, ինչպես նաև ոստիկանական համագործակցությունն այլ շահագրգիռ կողմերի հետ՝ իբրև հանրային վստահության ամրապնդման ազդեցիկ միջոցներ:

Շաբաթն ավարտվեց «Ոստիկանության և հասարակության փոխհարաբերությունները» սեմինարով, որն անցկացվեց հունիսի 5-ին. այն նախատեսված էր ոստիկանության միջին հրամանատարական կազմի և Ոստիկանության կրթահամալիրի անձնակազմի համար: Լինելով Համաժողովի շարունակությունը՝ այն ընդգրկեց ավելի գործնական հարցեր՝ նպատակահարմար գործնական ոլորտի աշխատողների և դասախոսների համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ



Ապրիլի 15-ին ԵԱՀԿ-ն նորաստեղծ Պետական քննչական կոմիտեին նվիրաբերեց տասնհինգ համակարգիչ և երեք տպիչ-սկաներ մեքենա, ինչի նպատակն էր կառույցի թափանցիկության բարձրացումը և աշխատակազմի կարողությունների հզորացումը: Այս նախաձեռնության արդյունքում ներդրվեց փորձնական մի ծրագիր, որը պետք է խթանի Երևանի քննչական երկու վարչություններում նյութերի թվայնացումը՝ ունենալով տարածքային ստորաբաժանումներում հետագա թվայնացման հեռանկար: Գրասենյակը տեխնիկական սարքավորումներով օժանդակեց նաև Կոմիտեի կազմում գտնվող ուսումնական կենտրոնին՝ քննիչների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով:

ԵԱՀԿ-ն նաև աջակցել է կոմիտեի պաշտոնական կայքէջի (www.investigative.am) մշակմանը՝ բարձրացնելու կառույցի գործունեության թափանցիկությունը և հանրային հասանելիությունը: Ավելին՝ կազմակերպվեցին լրագրողների, քաղաքացիական հասարակության, փաստաբանների և Կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ սեմինարներ՝ քննարկելու քրեական գործերի լուսաբանման հետ կապված նուրբ խնդիրները, քննիչների և լրագրողների հաղորդակցության հարցերը, ինչպես նաև ազատության և անվտանգության իրավունքները հանրային շահի կարևորության լույսի ներքո: Գրասենյակի օգնությամբ Կոմիտեն նաև հրատարակեց քննիչների համար օգտակար ուղեցույց քրեական ընթացակարգերում կողմերի միջև փոխհարաբերությունների մասին:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ

Մոդել ԵԱՀԿ համաժողով Գյումրիում

Մոդել ԵԱՀԿ համաժողովը կազմակերպվեց մայիսի 1-ից 2-ը, որին մասնակցեցին Շիրակի մարզի շուրջ 60 երիտասարդ: Համաժողովից առաջ մասնակիցներն ունկնդրեցին միջազգային հարաբերությունների, դիվանագիտության և բանակցային հմտությունների վերաբերյալ դասընթացներ, ստացան ԵԱՀԿ-ի և նրա գործունեության ուղղությունների մասին տարբեր նյութեր: Համաժողովի նպատակն էր երիտասարդությանը ԵԱՀԿ-ին ծանոթացնելը, ինչպես նաև խթանել մարզերի երիտասարդների մասնակցության հնարավորությունները:

Կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի ընդլայնում

ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ Գորիսում, Կապանում և Մեղրիում գործող կանանց ռեսուրս կենտրոնները ընդլայնել են իրենց գործունեությունը՝ կազմելով Հայաստանի Կանանց ռեսուրս կենտրոնների ցանցը (Վիններթ Հայաստան), որն էլ իր հերթին դարձել է Կանանց ռեսուրսային կենտրոնների Եվրոպական ընկերակցության (Վիններթ Եվրոպա) անդամ: Այս կապակցությամբ ԵԱՀԿ-ն մայիսի 4-ից 7-ը հյուրընկալել էր «Վիններթ Եվրոպա»-յի պատվիրակությանը: Ներկայացնելով իրենց գործունեությունը դոնոր և հասարակական կազմակերպություններին Երևանում՝ պատվիրակներն ուղևորվեցին Սյունիքի մարզ՝ տեղում ծանոթանալու «Վիններթ Հայաստան»-ի գործունեության մանրամասներին:

Երկրաշարժային ճկունության սցենարներ Ստեփանավանի համար

ԵԱՀԿ աջակցությամբ «Շրջակա միջավայր և անվտանգության» նախաձեռնության մաս կազմող Քաղաքացիական Գործունեություն Հանուն Անվտանգության և Շրջակա Միջավայրի (ՔԳՀԱՇՄ) փոքր դրամաշնորհների ծրագրի շրջանակներում Ստեփանավանի երկրաշարժի դիմակայունությանն ուղղված երկու սցենարներ կազմվեցին, որոնք արդեն հանձնվել են քաղաքապետարանին: Ի հավելումն՝ քաղաքապետարանին են տրամադրվել նաև քաղաքի հինգ դպրոցների և երեք նախակրթարանների համար կատարված սեյսմիկ անվտանգության խորքային գնահատումները: Նշված հաստատություններում ձևավորվել են Աղետի ռիսկերի նվազեցման արագ արձագանքման ջոկատներ:

Մկնդեղի գերեզմանոց Ալավերդիում

Արձագանքելով Լոռու մարզպետի խնդրանքին՝ ԵԱՀԿ պատվերով անցկացվեց համապարփակ ուսումնասիրություն Ալավերդու մկնդեղի գերեզմանոցի վերաբերյալ, որի համար Գրասենյակը ներգրավեց թափոնների կառավարման միջազգային երկու փորձագետների: Հետազոտությունը ներառում է վերականգնողական գործողության տարբերակներ և առաջարկությունների հիմնավորում: Հունվարին հետազոտությունը ներկայացվեց ՀՀ բնապահպանության նախարարությանը, իսկ Ալավերդու քաղաքապետարանն իր 2015 թ. գործողությունների ծրագրում ու բյուջեում կատարեց խնդրի լուծմանն ուղղված անհրաժեշտ փոփոխություններ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Երեխաների սոցիալական ծառայությունների ուղեցույց

ԵԱՀԿ-ն «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ մշակեցին երեխաներին և նրանց ընտանիքներին բոլոր մարզերում սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունների վերաբերյալ ուղեցույց: Վերջինս ներկայացվեց մայիսի 14-ին կազմակերպված կլոր սեղանին, որի ժամանակ բարձրաձայնվեց երեխաների պաշտպանության և բարեկեցության ավելի լավ համակարգման, ոլորտի մասնագետների, պետական և ոչ պետական գործակալությունների ավելի սերտ համագործակցության մասին՝ հօգուտ երեխայի իրավունքների և շահերի լավագույն պաշտպանության:

Պրոբացիայի ծառայության վերաբերյալ ուսումնասիրություն

ԵԱՀԿ օժանդակությամբ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն իրականացրեց ուսումնասիրություն քրեակատարողական հիմնարկների բարեփոխումների և Հայաստանում պրոբացիոն ծառայության ներդրման հեռանկարների վերաբերյալ, որը հետապնդում էր մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների և օրենսդրության լավագույն փորձի արդի մարտահրավերները հետազոտելու նպատակ: Ուսումնասիրությունը նաև ներկայացնում է առաջարկություններ առավել պատշաճ պրոբացիոն ծառայություն ներդնելու ուղղությամբ:

Արդարադատության խորհրդի մասին հետազոտություն

«Իրավունքների և ժողովրդավարության տուն» ՀԿ-ի՝ ԵԱՀԿ աջակցությամբ իրականացրած հետազոտությունն արտացոլում է Արդարադատության խորհրդի կարգավիճակին, նրա ձևավորմանն ու գործունեությանը վերաբերող արդի հիմնախնդիրները սահմանադրական ընթացիկ բարեփոխումների համատեքստում: Հետազոտությունը նաև տրամադրում է տեղեկատվություն միջազգային փորձի մասին:

Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխություն

ԵԱՀԿ-ն, ԱՄՆ և Բրիտանական դեսպանատները, ԵՄ պատվիրակությունը, ԵԽ-ն և ՄԱԿ-ը մեծարեցին իրենց աշխատանքով Հայաստանում մարդու իրավունքների զարգացմանը նպաստող անհատներին հունիսի 4-ին Երևանում տեղի ունեցած Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխության արարողության ընթացքում: Դեսպան Անդրեյ Սորոկինը՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարը, «Ազատության պաշտպան» մրցանակով պարգևատրեց Շուշան Դոյդոյանին՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահին, բաց, թափանցիկ և պատասխանատու կառավարմանն ուղղված նրա նպաստավոր ջանքերի համար: Այլ մրցանակակիրներ էին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան (Խիզախ կին), Զարուհի Մեջլումյանը՝ լրագրող և «Անմեղության նախագիծ» ՀԿ-ի նախագահ (Մեդիայի գերազանցություն), Թրաֆիքինգի դեմ պայքարի միջգերատեսչական խումբը (Կառավարության բարեփոխիչ), Արծրունի Իգիթյանը՝ Ախուրյանի գյուղապետ (Տեղական ինքնակառավարման բարեփոխումների առաջատար), և Արմեն Ալավերդյանը՝ «Ունիսոն» ՀԿ-ի գործադիր տնօրենը (Ներառման խթանում):

ԵԱՀԿ մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) գործում է հանուն իր 57 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին Հայաստանին՝ ԵԱՀԿ առջև անվտանգության բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքներ, ստանձնած իր պարտավորությունների կատարմանը օժանդակելու համար:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ Սունդուկյան 64/1, հեռ.՝ (0037410) 229610/11/12,

էլ.փոստ՝ yerevan-am@osce.org, կայքէջ՝ http://www.osce.org/yerevan: